ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ

«14» հուլիսի 2026թ. N ՄՈ/424-Ա

ք. Արմավիր

«ԼԵՌՆԱՄԵՐՁԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆ ՇՈՒՇԱՆԻԿ ՈՍԿԱՆՅԱՆԻՆ ԱՐՁԱԿՈՒՐԴ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 160-րդ և 164-րդ հոդվածներով, «Տարածքային կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի օգոստոսի 11-ի N 1599-Ն որոշմամբ սահմանված հավելվածի 1-ին կետը և Շուշանիկ Ոսկանյանի 2026 թվականի հուլիսի 13-ի դիմումը.

որոշում եմ՝

1. «Լեռնամերձի հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրեն Շուշանիկ Ոսկանյանին տրամադրել ամենամյա հերթական երկարացված արձակուրդ՝ 2026 թվականի հուլիսի 20-ից օգոստոսի 21-ը ներառյալ՝ 25 աշխատանքային օր տևողությամբ:
2. Շուշանիկ Ոսկանյանի արձակուրդում գտնվելու ժամանակահատվածում «Լեռնամերձի հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի պարտականությունների կատարումը վերապահել «Լեռնամերձի հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության ուսուցիչ Ռոբերտ Էվաջյանին:
3. «Լեռնամերձի հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության ուսուցիչ Ռոբերտ Էվաջյանի աշխատավարձի վճարումը 2026 թվականի հուլիսի 20-ից օգոստոսի 21-ը ներառյալ իրականացնել տնօրենի պաշտոնային դրույքաչափին համապատասխան:
4. Շուշանիկ Ոսկանյանին աշխատանքի մեջ համարել 2026 թվականի օգոստոսի 24-ից:
5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

14.07.2026

X

ՎԱՀՐԱՄ ԽԱՉԱՏՐՅԱՆ

ՄԱՐԶՊԵՏ՝ Подписано: KHACHATRYAN VAHRAM 2902840179 Վ. ԽԱՉԱՏՐՅԱՆ